

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ  
 ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ  
 ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ  
 ՆԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ  
 ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ  
 ԷԶՄԻԱԾՆԻ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՆՆՈՒԹԻՒՆ  
 ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ,  
 ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆՅ ՆԱՅՈՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ  
 ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,  
 ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՆԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԲԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ  
 ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՆԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
 ԽՈՐՆՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՍԻՐԵՅԵԱԼ ՆԱՄԱՅՆ ՆԱԲԱՏԱՅԵԱԼ  
 ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՆԱՅՈՅ

«Որ Քրիստոսանուէր կոչմամբն ծագեցար որպէս  
 զարեգակն եւ լուսաւորեցեր զՆայասարան աշխարհս  
 ասպումագիտութեամբ, տէր սուրբ Գրիգոր. անդադար  
 բարեխօսեան վասն անձանց մերոց»:

(Շարակնոց)

Ամենակալ Աստուծոյ ողորմութեամբ ի պանծացումն Նայասարանում քրիստոնէութիւնը  
 պէտական կրօն հռչակելու 1700-ամեայ յոբելեանի՝ յանուն Սուրբ Գրիգոր Լուսաւորչի կա-  
 ռուցուեց քաղաքամայր Երեւանի Մայր Եկեղեցին եւ, ահա, ութ տարիներ ասպումային  
 օրհնութիւն է բաշխում հաւաքացեալ Մեր զաւակներին:

Այս սուրբ տաճարում՝ մարմարակերտ ու պարկերազարդ 200-ամեայ կաթողիկէի ներ-  
 քոյ ամփոփուած են Սուրբ Գրիգոր Լուսաւորչի սրբազործող նշխարները, որոնց՝ եկեղեցի  
 մտնելիս երկիւղածութեամբ խոնարհուելով եւ Քրիստոսի մեծ վկայի բարեխօսութիւնը հայ-  
 ցելով, մեր աղօթքն ենք բարձրացնում առ Աստուած:

Առաքելապարիս հաւաքոյ մեր Նայրը, որ եղաւ կենդանի նահապակ, իր անդադրում  
 քարոզութեամբ Նայոց աշխարհում համասփիւռ տարածեց Քրիստոսի Անտարանի լոյսը եւ  
 Տիրոջ օգնականութեամբ հիմները դրեց Նայոց Մեծ Դարձի: Իր ժողովրդի համար աղօթքով  
 ու հայցով ապրած եւ մենաւոր ճգնաբանում ի Տէր հանգչած մեր մեծ Նայրապետի նշխարնե-  
 րի գիտն ընդունուեց իբրեւ ասպումային պարգեւ մեր ժողովրդին: Մեր սուրբ Նայրապե-  
 տի գերեզմանը Թորոսանում դարձաւ ուխտապետի, եւ նրա օրհնեալ մասունքներն ամփոփող  
 «լուսընկալ ու շնորհաբաշխ» Աջը՝ խորհրդանշելով Նայոց Կաթողիկոսութեան, որով օրհնում  
 է Սրբալոյս Միւռնը, որպէսզի միւռնադրոշմ՝ շնորհանորոգ աճենք ու զօրանանք մեր հա-  
 ւաքի մէջ:

Օրհներգութիւններով ու փառաբանութեամբ են յիշուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մեր  
 Նայրապետի նշխարները պարմութեան մէջ: Երանեալ սրբի մասունքները դրուել են եկե-

ղեցիների հիմքերում, ընդամասը են փարուել ժողովրդին փազնապալի օրերին եւ յաղթանակների առիթով, որպէսզի նրանց սրբագործող զօրութիւնը փարածուի ասպնածպարգեւ մեր Տայրենիքին ու հայրենեաց կեանքին, որպէսզի ամրանան մարդիկ հաւաքքի ու հաւաքարմութեան մէջ, եւ փառաբանուի Աստուած, որ արժանացրեց մեր ժողովրդին Իր Միաձին Որդով փրութեամբ փրկութեան շնորհին եւ Իր Սուրբ Տոգու առաջնորդութեամբ խնամեց ու պահպանեց ճշմարտութեան կենարար ճանապարհին:

Մեծ ու սքանչելի խորհուրդ ունի այն իրողութիւնը, որ այսօր ազապ մեր Տայրենիքում մեր հոգեւոր նոր վերազարթնքի շունչն ու հոգին մարմնատրող քաղաքամայր Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսատրիչ Մայր Եկեղեցում մեր մեծ Տայրապետի եւ առաջին Կաթողիկոսի նուիրական ու սրբագործող նշխարների առջեւ Բարձրեալին երկրպագութեամբ եւ խոնարհումով մաքրագործում ու սրբում են հաւաքացեւոց սրտերն ու հոգիները՝ կրելով երկնային ներգործութեան լոյսն ու զօրութիւնը:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց.

Տայրապետական այսու Կոնդակով «Գիւր նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ» փօնը հռչակում ենք Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսատրիչ Եկեղեցու ուխտի օր՝ յորդորելով ամեն փարի փօնի օրն ուխտատրաբար այցելել Սուրբ Գրիգոր Լուսատրիչ Եկեղեցի՝ սրբի նշխարների առջեւ ծնրադրութեամբ փառաբանելու Բարձրեալն Աստուծոն եւ Սուրբ Տայրապետի բարեխօսութիւնը հայցելու մեր Եկեղեցուն, Տայրենիքին ու ժողովրդին, մեր ընտանիքներին, մեր կեանքին ու գործերին: Տաւաքքի վեմի վրայ Աստուծոյ օրհնութեամբ պիտի կերպուի մեր ժողովրդի բարօր կեանքը, բարեյոյս ու լուսատր գալիքը: Այսօր մեր հայրերի հեպ աղօթենք. «Ի փաճարի քում սրբութեան երկրպագեմք քո նշխարաց, փառատրեմք զօր յիշապակի կապարման քո հանգստեան. առ Քրիստոս բարեխօսեա վասն մեր՝ քո փօնողացս» (Շարակնոց):

Թող Բարին Աստուած միշտ հաստատուն ու շէն պահի Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսատրիչ Մայր Եկեղեցին եւ ամենակեցոյց Իր շնորհներով առապապէս օրհնի Իր Սուրբ Անուանը միշտ յուսացեալներին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՏԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 28-ն յունիսի  
յամի Տեառն 2009 եւ ի թուին հայոց ՌՆԾԸ  
ի Մայրաւանս Սրբոյ Էջմիածնի  
ընդ համարաւ 522